

ԱՐԵՒԻՄՈՒՏՔ

ԱՐՁԱԳԱՆԳ ԵՐՐՈՊՈՅԻ ԱՌԻՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ.

Ա. ՏՈՐԻ. ԹԻՒ 22. Հրատարակի ամիսը եւրոպ. ամիսը. չափակաւ շաբաթ Երաշէ: Գործակալ. — Բարիկ, Արցալ Փնայիպեան, 23, rue de Fleury. 1959 Եւրոպ. 15.
— Պոլիս, Արցալ Փ. Միլիթեան. — Իզմիր, Արցալ Ալիիպեան. — Եյլաթա, Արցալ Տիւ Դաւաթեան Նղարի:

(Հարստեանիւրիւն, տես երես 161.)

Այսպէս ահա մեր դպրութեան մէջ չ'կայ ոչինչ նորութիւն. մի և նոյն բաները կրկնուածն ամենայն օր, չեմ տուած օրացոյցներէ համար, որ միշտ նոր ևն տարվում դանդաղան անկերում, որոնց մի բաները Լեւոնակներն ևն գործակում, միտը արիւն ծագեկաւ հոտար շար ու բարի օրերն է ցոյց տուիւ. հշմարիտ է և չեմ ուրանում, որ էփիմեթու ևս պակաս չէ, այն հրաշայի զիրքը, որ մեր ժողովուրդը սիրումէ, որի մէջ գրվում ևն ամենայն տարի աշխարհի երեսին պատմեկաւ գործերը, որեղակի է լուսնի խաւարումը իւրեանց գոշակութենէնքով, տարդիկի ցնայը ևս լուսնի ծիսար մատենադրութիւն! Եւ ինչպէս կարելի է տանանչէլ, որ ժողովուրդը ընծայք ապա տարակի մատենադրութեան, ընդունի նորան սիրով սեղանով:

Բնական տղիւրքի մէջ ոչինչ բան չ'կայ, ոչինչ բան չէ կատարվում ուստի խորհրդի. հեղինակները ևս, միտով այս հասարակաց բնական օրէնքի տակ, ամենայն բան գրելու ժամանակ ոչինչ է խորանց խորհարդը սենեան, և այս խորհուրդը պիտոյ է կարելի բուն լինի, ոչսինքն ժամանակի նաեղամանքներին բարեւար: Բայց ցանկով Լմ խոստովանում, որ մեր հին լեզուով խոսող հեղինակները պակաս ևն այս խորհրդից. մի այդպիսի հեղինակի սիրա սուել է շարապիկ կամ Թարգմանիկ մի գիրք, նա կանարումէ իւր սրտի ցանկութիւնը. բայց ինչ խորհրդով, օգտուր ինչ է, ով է կարգադրող կամ հասկացողը, նա չէ մտածում. նա ցանկանում, միայն, որ զգրի հոկաւումը տուած լինի իւր անունը. և թէ փոքր ինչ ուսել է հետխոսել, Եղիշէի հետ հաւատար է իւր մտքումը. Փարսեցիին, շատ ցած է նորանից. և հետևումէ, որ ռեւրի ամիստութեան կողմից Խորհրդաց ևս պակաս չ'մնայ. բայց ևս կարծեմ աւելորդ տապի. եթէ յատկեւերին գրելու ժամանակ աշխատումն ամենայն բառ այնպէս գործ ամէլ ինչպէս իրկերանն է գործածել, ինչ պատահաւոր հայերս ամբողջ ռեւր և դարձուանէր չէ պիտոյ ղենէր մեր շարադրութենէրի մէջ Խորհրդաց և Յովնանէն Կաթողիկոսից. Ինչ պատահաւոր ճիւ լեզուի անգործածական բառերը և

ռեւրը անուն առնէր, որոնք հին ժամանակներումը տեղ տեղ Երեւումէն գործ ամիւմ. առանել անհասկանալի կը լինի մեր գրածը և կը փառաւորի մեր անունը, կ'առնէ ու երեւիկի նայկարան է.

Չեմ խղճաւորվում այս խորհրդը արեւել ժամանակ, պատեւա, կենդանի հշմարաւթիւն է, թէ և դժբաղդարար « Զայն բարբառայ յոմոպաւի: »

Դպրացական աշխատութենով, որ մեր պատուելի հնասէր հեղինակը համարումէ, թէ կարելի էր մեծ աղղկեւթիւն ունենալ ժողովրդի լուստորութեան վերայ, ունա հազար էրէր հորիւր տարի լուստ, հազար շար հարիւրն է գնում, որ ոչինչ չ'լուսաւաղաւ. և թէ Լալերի մէջ կան մարդիկ, ոչ օտար դպրութենէրի շնորհն է. եթէ պատուելի հեղինակներն ընծայքը այսպիսի շարունակի միշտ, ապա և Լալերի հոգեղեն կեանքը կը շարունակի մի օրինակ ինչպէս եղի է և կայ է կը մնայ այնպէս, այսինքն հասարակ ժողովուրդը գտակ բաւարարութեանց, իսկ բուն ուսումնել կրթեցող կարծա օտարների շնորհիւ:

Այս ողբալի բանի պատեւաւ որպէս տեսնելի է ամենայն մարդու, ԼԹէ միլին գործիւր արեւալական ակնոցները աչքերի վերայից հոնում, նային ամենայն բանի վերայ Լիւրէլի հեռադիտակով. այն ժամանակ կը տեսնեն անապատայս, որ Լալերը մինչև այժմ աշխարհական զգրութիւն չ'են սենեցէլ. լա ու վատ եգիլ է և կայ արեւալական դպրութիւն, ինչպէս վերեւումը յիշելիւր. կը տեսնեն, որ ու մի կողմից իւր լեզուի հետեւումը չ'փոխելով, միտ կողմից մի և նոյն բանը հարիւր անգամ գրելով օտարացուցել է ժողովուրդը իւրանից այնպէս, որ այժմ հին լեզուն մեր ժողովրդի համար եգիլ է Ալիպաուսի մեղենական անմասշտիւ լեզու: Անցան այն ժամանակները, զեղեցիկ խոսումէ Պարոն Պիտրեմիսիին երբ համարումէին մարդիկ, թէ մի Ժիւսին քուրմի նանդեւով կարելի է ժառանգ գիտութենէրի աշտանակիւ. սոցան ոչն ժամանակները, կրկնումէ, երբ չափով ու կըրով տալիս էին աղղին իմաստութեան լուր և ոյն, ինչ ուղղութենով որ կամենումէին. պարմանալի է աշխարհիս փոփոխութիւնը. բայց առանել պարմանալին ոչ է, որ այժմ ևս կան շատ մարդիկ, որ չ'են հաւատում,

Թէ այս փոփոխութիւնը իրագործված է արդէն աշխարհի երեսին:

Նստմանէին երկրայութիւն չունիմ այս փոփոխութեան վերայ. միայն այս եւ մտածում, Թէ հաղարարութեան տարիներով քննուց յետոյ ընթաց աշխատութիւն պիտի մեր Ազգին Հայկական խօսքը վերակենցաղելու, քանի սիրտ ու ձեռք նոր հայախօսութեան ամբարտակ յարուցանելու հնուածեան աւելակների վերայ: Այս, մեծ հանդէս կայ բանիմաց Հայերի առաջն, ԼԹէ դոքա, հասկանալով իրաց կարգի փոփոխութիւնը, ցանկանային մշակել Հայկական անշէն տնայտարար և ամբանացուցանելին իւրեանց անունը մշտնջենական արձաններով — աննախանձ աշխատութեններով:

Բայց իմ այս ասելովը Թող մեր սիրելի Ազգը չ'իմանայ Թէ ազգի համար կայ չկայ, միայն ուսումնականքն էն պարտական գործ կատարել, ոչ. Ազգային խօսքի տնտեսութեան մէջ ամենայն մարդ իւր վիճակի և կարողութեան յարմար պիտոյ է գործակատար գտանվի. մի միայն հեղինակները ոչինչ չեն կարող տանել: Դեռ Թէ զրեցին շատ բաներ. գրուածքը կարօտ են տպվելու. հեղինակը, տարիներով կեանք մաշելուց յետոյ իւր աշխատութեան վերայ, պարտական չէ հոգալ և նորա տպագրութիւնը, նա յանցաւոր չեղաւ, որ աշխատեց. նորա աշխատութիւնը պիտոյ է դառնայ հասարակաց ժառանգութիւն, Թէ և դժբաղդաբար այսպէս է եղել մեր հեղինակների գործակատարութիւնը մինչև այսօր: Ազգային եղբարք պարտական են նոյնպէս քաջալերել իւրեանց համար աշխատողը, սրբել նոցա ճակատի քրտինքը և բարի և Ազգաշէն գործերով օրինակ դառնալ նոյնպէս իւրեանց ընկերներին:

Նստման Ազգային խօսքի շինութեան մասին խօսակցութիւնս կնքումս սորանով, Թէ մինչև նոր լեզուն չ'լինի առ հասարակ մատենագրական լեզու, մինչև գրուածների իմաստը ըմբռնելի և հասկանալի չ'լինի ժողովրդին, մինչև Ազգը խոհեմ ճանապարհներով հոգս չ'առնէ սեպհական Ազգային դպրոցների մասին և վերջապէս, որ ամենից հարկատուն է, մինչև մեր պատուելի հեղինակները դպրոցական վառքը յետ դնելով Ազգի համար չ'աշխատելին առողջամիտ կերպով, և միտ կողմից Ազգի կարողը օգնութիւն չ'առնէին նորանց, սուտ է ամենայն լուսաւորութիւն. և առանց ամենայն գործունէութեան սպասելը մի լուսաւորող ժամանակի, ոչ այլ ինչ է, ԼԹէ ոչ, անձնախաբէութիւն:

Անքնելով իմ խօսակցութիւնը Հայկական մատենագրութեան վերայ, արժան էմ համարում ծանօթութիւն տալ այս առի մի քանի բաների մասին, որ վերաբերվում էին ներկայ աշխատութեանս:

Մեր Ազգայիններէրց, որ ծանօթ էին Ֆրանսիարէն, Գերմաներէն և Ռուսերէն լեզուներին, արդէն կարգացած կը լինին «Թափառական Հրէայ» վիպասա-

նութիւնը և ճանաչած նորա աղնիւ և սուրբ խորհուրդը, ուրեմն և արժանաւորութիւնը. վասնորոյ աւելորդ համարելով այս մասին երկար բարակ քարոզ կարգալ, պարտականութիւն էմ համարում միայն այսքան տանել, որ, ԼԹէ մեր Մխիթարեան գերապատիւ Հարք չեն կամեցել այս բանը հայերէն ծարգմանել և տպել, պատճառը կարօտութիւն չունի մեկնութեան: Նստման Սիւ, մարդկութեան բարեկամ Պարոնը, այս աշխատութեան մէջ նկարագրումէ Յիսուսեան աբեղաների անբրիտանեայ և բարբարոս վարք ու բարքը. Մխիթարեան գերապատիւ Հարք ինքեանք ևս կրօնակից և շատագով լինելով Յիսուսեաններին (1) հաւանական և շատ բնական է, որ նոցա ձեռքը չէր համարձակվելու այսպիսի գործ կատարել, մանաւանդ որ Տէր Պատը նդովել է այս աշխատութեան հեղինակը և կարգացողը, ուրեմն, և ծարգմանողը: Նստման Սիւ ճշմարիտը պիտոյ է խոստովանել. ինչպէս կարելի է, որ մի Պապական աբեղայ հակառակվի այնպիսի մի մարդու, որ Աստուծոյ փոխանորդ էր, արքայութեան դուռը բացող և փակող... (միթէ): Գոհ էմ Աստուծոյ, որ Պապական չ'լինելով ունիմ աղատութիւն գրել և ծարգմանել այն բանը, որ շատագով էր ճշմարտութեան, որ պախարակումէր Քրիստոսի օրէնքին ընդդէմ գործելը և նկարագրումէր ամենայն ինչ մաքուր խղճմանքով. և այս երկար աշխատութեան մէջ, ամենայն քայլափոխումս նոր քաջալերութիւն էմ զգացել, որովհետեւ պիտոյ է բարձրացնել ճշմարտութեան զօրակը:

Իմաստուն և բանագէտ մարդերի համար, բացաղրութեան կարօտ չէ իմ նպատակը. իսկ մեր միւս եղբայրակիցներին, որ կէս մի բազմի անգամաւորով, կէս մի իւրեանց մեղքովը հեռի են մնացել լուսաւորութեան ճրագից, պիտոյ է տանել, Թէ այս վիպասանութիւնը, այս հրաշալի գործը, առանց ամենէին կողմնապահութեան նկարագրելով Յիսուսեանների ընծայքը գէտ ի Ռենդըլօնի ժառանգները, կարող էր ըմբռնելի կերպով հասկացուցանել մեր Հայերին, Թէ ինչպէս էր Յիսուսեան Վարդի ուղղութիւնը որ Պապականութեան հարադատ դուռակներն էին: Այսքան ևս աւելորդ էր տանել, ԼԹէ մեր Ազգի բոլոր որդիքը ձեռնհաս լինէին քննել իմաստասիրաբար, Թէ ինչ է Պապականութիւնը առ հասարակ. քննել նորա պատմութիւնը, և նորանից կարողանալ դուրս բերել մի անկողմնապահ և ճշմարիտ Նորակացութիւն: Բայց ախիս, որ այս չ'կայ ընդհանուր մէջ. Թէպէտ և մասնաւոր մարդերում Քրիստոսի կենարար Աւետարանը, ուսուցանելով անհակառակելի ճշմարտութիւնը, տնկելով Աստուածային

(1) Տես Փախալեանի Եկեղեցական պատմութեան (տպած. 1848, Վենետ.) 925 էրեսից մինչև 932 էրեսը:

այսինքն այն ոճերը և դարձուածները, այն շատ անգամ և բառերը, որոնց մէջ կարելի էր պարունակել նոր մտքերը, որ մինչև այժմ չ'կային Հայերի մէջ :

Ես շատ լաւ գիտեմ, որ իմ խօսակցութեան ձեւը, ունի պակասութիւններ, բայց ինչ առնես, ամենայն մարդ իւր պէս կը խօսի, անհատութիւնը չէ կարելի ոչնչացուցանել : Իմ խորհուրդը այն չէ եղել, որ իմ գրածը ուրիշին օրինակ դառնայ . ես մի միայն ցանկացել եմ, որ այս վիպասանութիւնը և Յիսուսեան Վարդի պատմութիւնը Հայերի համար ևս կենդանի լինի աշխարհի երեսին . — Ես հասած եմ իմ նպատակին :

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ.

ՀՐԱՀԱՆԳ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ

ԸՍՏ ՈՒՂԱՓԱՌ ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ.

Հ. Ո՞ր է նախկին հիմն և բուն հեղինակ Քրիստոնէական հաւատոյ :

Պ. Է՛Տէրն մեր Յիսուս Քրիստոս :

Հ. Զիմարդ աւանդեաց նա զվարդապետութիւն իւր :

Պ. Նախ ինքնին բացայայտ բանիւք ուսուցանելով՝ մինչ էրն ի վերայ երկրի, և ապա Առաքելոցն միջնորդութեամբ :

Հ. Առաքելքը հրաշք աւանդեցին :

Պ. Մերձ ձայնիւ՝ այս է՛ քարոզութեամբ, և մերձ զրով հրատարակելով :

Հ. Զինչ պահանջէ ի մարդոյ Հաւատն Քրիստոնէական :

Պ. Պաշտել զԱստուած՝ կենդանի Հաւատով, հաստատուն Յուսով, և անկեղծ Սիրով :

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

ՀԱՒԱՏՔ.

Հ. Զինչ էն Հաւաքը :

Պ. Ճանաչել՝ ընդունել և խոստովանիլ զամենայն ճշմարտութիւնս յայտնեալս յԱստուծոյ :

Հ. Ուստի մարմ է առնուլ զյայտնութիւն Աստուծային՝ ճշմարտութեանց :

Պ. յԱստուածաշունչ սուրբ զրոց, այն է՛ ի Հին և ի Նոր Կտակարանաց :

Հ. Ընդէր մատենն այն կոչի Աստուածաշունչ :

Պ. Զի ջնչմամբ՝ այսինքն ազդեցութեամբ՝ Հոգւոյն Աստուծոյ գրեցաւ, և ո՛չ ըստ մարդկեղէն ուսման :

Հ. Ո՞րք եղէն զրոգը Կտակարանաց :

Պ. Փրոգը Հնոց Կտակարանին եղէն Մարգարէք, և Նորոյս՝ Առաքելքը :

Հ. Ի՞նչն զիրս բովանդակին :

Պ. Հին Կտակարանն բովանդակի ի քառասուն և հինգ գիրս . իսկ Նորս՝ ի քսան և եօթն :

Հ. Ե՞րբ ասի Հաւատն՝ կենդանի :

Պ. Յորժամ լծորդեալ իցէ ընդ բարի կամ առաքինական գործոց :

Հ. Քանի՞ զլիաւոր մասունք էն Հաւատոյ :

Պ. Տասն՝

Ա. Գոյութիւն Աստուծոյ :

Բ. Կատարելութիւնը Աստուծայինք :

Գ. Երրորդութիւն Աստուածային անձանց :

Դ. Արարչագործութիւն :

Ե. Նախախնամութիւն :

Զ. Մարդեղութիւն Աստուածորդւոյն :

Է. Եկեղեցի Քրիստոսի, և խորհուրդը նորա :

Ը. Շնորհաբաշխութիւն :

Թ. Յարութիւն մեռելոց :

Ժ. Վերջին դատաստան :

Ա. Գոյութիւն Աստուծոյ :

Հ. Ի՞նչ ցուցանի գոյութիւնն կամ գոյն Աստուծոյ :

Պ. Վկայութեամբ սուրբ Գրոց, որք քարոզեն՝ թէ զո՞յ Աստուած. և թէ՛ պարտ է հաւատալ ի նա :

Հ. Ի՞նչ ևս :

Պ. Հայելով ուշի մտօք ի հրաշակերտս նորա յանձնարարածս, որք էն զործք սքանչելիք՝ յայտնիչք գերաբուն զօրութեան՝ մեծութեան՝ բարութեան և իմաստութեան նորա :

Հ. Ո՞րք ի մարդկանէ զովին հանապարհաւ Լիին յԱստուածածանօթութիւն :

Պ. Սակաւք ոմանք ի հեծանոսաց :

Հ. Ընդէր ո՛չ ամենեքին :

Պ. Զի չեղէն արժանի ընդունելոյ զօժանդակութիւն շնորհաց Աստուծոյ առ այն :

Հ. Որք միանգամ ծանեանն զԱստուած՝ սխալեցին զնա ըստ արժանւոյն :

Պ. Ո՛չ. զի դուն ուրեք գտանէր ի նոսա ճշմարիտ Աստուածապաշտ, որպիսի որ Յօքն էր, այլ ընդ հա-

կառավարձ՝ բաղումը ի նոյնն է խաւարեալ մօտը սահեցան ի կառավարումուն :

Հ. Զինչ է Աստուած :

Պ. Զինչութիւնն Աստուծոյ անգիտելի է և անհաս յամենայն ստեղծական մտայ :

Հ. Ընդէր ապա ասի « Հոգի է Աստուած. Աստուած ընչ է, սէր է, հոգի է (Յովն. Գ. 24 : Ա. Յովն. Ա. 3 : Գ. 8. 16 : Բ. Օրին. Գ. 24 :)

Պ. Այդոքիկ և այգալիսիւր այլաբանաբար և եթ ասին զԱստուծոյ. իբրև զի նա վասն ամենամարտի և ամենապարզ նրբութեանն՝ կոչի Հոգի, վասն անսուտ երջմարտութեանն՝ Լոյս, վասն զմեղ սիրելոյն՝ Սէր. վասն անաչառ արդարութեանն՝ Հուր :

Հ. Աստուած յումմէ եղև :

Պ. Ո՛չ յումմէ. զի է բնութիւն անեղ կամ անեղանելի :

Հ. Ե՞րբ երբեմն՝ մինչ ոչ էր Աստուած :

Պ. Ո՛չ, զի չիք նորա սկիզբն ժամանակի կամ եղանակի. այլ՝ էր միշտ, է, և եղիցի :

Հ. Աստուած ունի՞ դանդամ կամ զղջարանս. որպէս ունիմք մեք :

Պ. Ո՛չ, ըստ որում չէ նա մարդ :

Հ. Յինչ միտս ուրեմն առնուլ պարտ է զբանս գրոց՝ յորս ասի « Երեսը Տեառն, Աչք Տեառն, Ականջը Տեառն, Աք Տեառն, Ձեռն կամ Բաղուկ Տեառն » (Սաղ. Ժ. 8 : ԻԶ. 9 : ԼԳ. 16 : Հ. 18 : ՁԼ. 14 : ԳԳ. 5 :)

Պ. Յայդպիսի բանս՝ երեսը կամ աչքը իմանալ պարտ է դամենատես կարողութիւնն Աստուծոյ կամ զՏեսչութեանն խնամս. ակունջօք՝ զլսողութիւնն. առնուլ՝ զօգնականութիւնն կամ զպահպանողութիւնն. ձեռք՝ զԱրարչականն զօրութիւն. և բաղկաւ, զիշխանականն :

Հ. Զինչ է անունն Աստուծոյ :

Պ. Աստուած բաղում ունի անուանս, բայց է նա միանգամայն և անանուն :

Հ. Ո՞րպէս :

Պ. Ըստ այլ և այլ գործոց և կատարելութեանց նորա՝ այլ և այլ անունք ընծային նմա, որպէս՝ Արարիչ, Տէր, Տէր Աստուած, Տէր ամենակալ, Տէր զօրութեանց, Թագաւոր, Դատաւոր, Իշխան, Հայր, և այլն : Այլ չիք անուն և ոչ մի՝ որով մարթ իցէ յայտնել զբնութիւն կամ զէութիւն նորա :

Հ. Աստուած ինքն չյայտնեալ ինչ ումէր դանուանէ իւրմէ :

Պ. Միայն մարգարէին Մովսիսի ասաց զայն բան. « Ես եմ Աստուած Որ Էն (Ել. Գ. 14 :)

Հ. Ո՞րպէս մեկնի այդ բան :

Պ. Այսպէս. « Ես եմ որ եմ ինքնագոյ՝ անփոփոխ՝ միշտ նոյն. Ես եմ որ եմ միշտ. անսկիզբն՝ անվախճան. Ես եմ որ եմ էացուցիչ ամենայն էից : »

Հ. Ի մերում լեզուի ո՞ր անուն յաճախ վարի :

Պ. Անունս Աստուած. բայց զոն ի սուրբ Գիրս և այլ անուանք Երբայական ձայնիւ :

Հ. Զիմարդ ստուգաբանի Աստուածք անուն :

Պ. Ստուգաբանի « Աստած՝ Աստուաց՝ կամ Հաստուաց » այս է՝ յաստիս ամ՝ գոյացոյց՝ ստեղծ դարարածս :

Հ. Ուրեմն այդ անուն սեպական է Ստեղծողին :

Պ. Այո. բայց ասի ուրեք և զհրեշտակաց, ևս և զմանց ոմանց ի մարդկանէ որք թուին հաղորդակցութիւն ինչ ունել սրբութեանն Աստուծոյ կամ զիտութեանն կամ իշխանութեանն, որպիսի են Քահանայք, Մարգարէք, Թագաւորք, Դատաւորք, Առաջնորդք, Իշխանք :

Հ. Ինքն չէն աստուածք :

Պ. Ստուգիւ չէն, այլ՝ ստուծեամբ կոչեցան յայդ անուն :

Հ. Ո՞րք են Երբայական անուանքն Աստուծոյ :

Պ. Դիտաւորքն այսոքիկ են. Ազովնայի (այսինքն՝ Տէր). Սաղայի (որ է՝ Ամենաբաւական). Ելովէ (որ է Աստուած. զօրութեանց). Տէր Սարաւովթ (այսինքն՝ Տէր զօրութեանց) :

Հ. Ո՞ր է տեղի բնակութեան Աստուծոյ :

Պ. Աստուած կարօտ չէ տեղոյ՝ գոյով բնութիւն անբովանդակելի. ուստի և կոչի Անուր կամ Անուրէք, Անտեղի, Անվայրափակ : Բայց զօրութեամբ յամենայն տեղիս է և մերձ առ ամենեւին : Եւ շնորհօք ասի բնակիլ ի հոգիս սրբոց կամ արդարոց :

Հ. Ընդէր ուրեմն ասի՝ թէ Ածու նորա յերկինս է. կամ թէ՝ երկինք ածու նորա են (Սաղմ, Ժ. 5 : Եսայ ԿԶ. 1 :)

Պ. Վասն այն՝ զի անդանօր երեւին տաւեկապէս ժառք մեծութեան նորա : Եւ ուր միանգամ յայտնին ժառքն Աստուծոյ կամ զօրութիւնն, անդ ասի լինել Աստուած :

Հ. Տեսեալ է ոք երբէք զԱստուած, կամ կարիցե՞ տեսանել :

Պ. Ո՛չ. զի անհնարին է զգալի կամ մարմնական աչքօք տեսանել զանմարմին էութիւնն յինքեան :

Հ. Ե՞րբ արդէր և այլ Աստուած ճշմարիտ :

Պ. Ո՛չ. մի միայն է ճշմարիտ Աստուած իսկութեամբ :

Բ. Աստուածային Կատարելութիւն :

Հ. Ո՞րպիսի ինչ կատարելութիւնք են յԱստուած :

Պ. Աստուած՝ ամենակատար գոյով բնութիւն, ունի և կատարելութիւնս իւր ինքեան միայնոյ պատկանաւորս. իբր զի է նա Անփոփոխ, Անչափ կամ Անսահման, Ամենակարող, Ազատ, Անձնիշխան, Ամենագէտ կամ Ամենիմաստ, Ամենապարզ կամ Պարզագոյն,

Մշտնջենաւոր կամ Յաւիտեանական, Անմահ, Ամենաբարի, Ամենասուրբ, Ամենալայր, այսինքն՝ ամենայն ուրէք ներկայ, և այլն :

Դ. Երրորդութիւն Աստուծային անձանց :

Հ. Աստուծային անձինք քանի են :

Պ. Երեք :

Հ. Երկու ուրեմն Աստուծաւ պարտիմք դաւանել, կամ Երկու Աստուածութիւնս :

Պ. Ո՛չ Երկու Աստուածա՝ և ո՛չ Երկու Աստուածութիւնս, այլ՝ զԵրկու անձինս ի միում Աստուածութեան, և զմի Աստուածութիւն՝ յԵրկու անձինս :

Հ. Աստուածութեան Երկու անձանց :

Պ. Առաջինն է և կոչի Հայր, Երկրորդն՝ Որդի կամ Բան, և Երրորդն՝ Հոգի սուրբ, Հոգի Աստուծոյ կամ Աստուածեղէն :

Հ. Ի՞նչ մարդ է զալ ի ծանօթութիւն խորհրդոյ սրբոյ Երրորդութեան :

Պ. Միայն հաւատով՝ ըստ յայտնութեան սուրբ Գրոց, և յաւատ լուսով՝ Նորոյ կտակարանի :

Հ. Մի՞թէ ի Հին Կտակարանի չգտանին բանք զսրբոյ Երրորդութեան :

Պ. Գտանին՝ այլ աղօտ տեսութեամբ, և իբրեւ ընդ թողով :

Հ. Աստուածաբան՝ ո՞ր այն բանք իցեն :

Պ. Կայ ի զիրա Մենդոց ի զիմաց Աստուծոյ ասացեալ. « Արասցուք մարդ ըստ պատկերի Մերում... Արասցուք զմա օգնական... Եկայք իջցուք և խառնակեսցուք զԵրկուս նոցա » (Ա. 25 : Բ. 18 : ԺԱ. 7) : Յորս յոգնագէմ բայքն՝ Արասցուք, Եկայք, Իջցուք, Խառնակեսցուք, և զերանունս՝ Մերում, անշնչաւ զԱստուծային անձանց ցուցանեն զբազմութիւն :

Հ. Յայլ մարգարէս ևս կան բանք զայնպիսիք :

Պ. Այո՛. Գաւիթ ասէ. « Ողորմութեամբ Տէառն (Հայր) լի եղև երկիր. և բանիւ Տէառն (Որդի) երկինք հաստատեցան. և հոգեով բերանոյ նորա (Հոգի սուրբ) ամենայն զօրութիւնք նոցա (Սաղմ. ԼԲ. 5. 6) : Անգէաս ասէ « Ես ընդ ձեզ եմ, ասէ Տէր ամենակալ (Հայր). և բանն (Որդի) զոր ուխտեցի ընդ ձեզ... և հոգին իմ (Հոգին սուրբ) որ կայ ի միջի ձերում (Բ. 5. 6) : »

Հ. Երեք անձինք զանազանին ի միմեանց :

Պ. Այո՛, զանազանին անձնաւորութեամբ. զի այլ է անձն Հօր, այլ՝ Որդոյ, և այլ՝ Հոգոյն սրբոյ :

Հ. Բնութեամբ կամ զօրութեամբ կամ այլով իւրեւ ևս զանազանին :

Պ. Ո՛չ. զի են համաբուն, համալօր, համակամ և համափառ :

Հ. Յերից անձանց ո՞քան զո՞ մեծ է կամ փոքր :

Պ. Զիւր և չիւր ամենեւին ի նոսա մեծ և փոքր :

Հ. Զիւր յատկութիւն է իւրաքանչիւրումն :

Պ. Յատկութիւն իւրաքանչիւր անձին հանաչի յանուանէն. զի ո՛չ է՝ և ո՛չ ասի յատկաբար Հայրն՝ Որդի կամ Հոգի, և ո՛չ Որդին՝ Հոգի կամ Հայր, որպէս և ո՛չ Հոգին՝ Հայր կամ Որդի :

Հ. Զիւրդ ևս :

Պ. Հայր չճշեալ՝ և ճշող է. Որդին չճշող՝ և ճշունդ է. և Հոգին սուրբ ո՛չ ճշող՝ և ո՛չ ճշունդ, այլ՝ Էթղ (1) :

Հ. Յումմէ՞ յառաջ զան Որդին և Հոգին սուրբ :

Պ. Որդին ճշունդ է ի Հօրէ՝ անմարմնաբար. իսկ զՀոգոյն սրբոյ ասաց Քրիստոս. « Հոգին ճշմարտութեան ի Հօրէ ելանէ (Յով. ԺԵ. 26) : »

Հ. Հիմա ճշունդ Որդոյն « անմարմնաբար » ասացէր :

Պ. Զի չէ՞ այն ըստ եղանակի ճշնդեան մարմնեղինաց, այլ՝ զերանրաշ կամ անգիտելի օրինակաւ՝ որպէս բան ի մտաց, որպէս լոյս ի լուսոյ :

Հ. Ե՞րբ երբեմն՝ յորժամ ո՛չ էին Որդին և Հոգին սուրբ :

Պ. Ո՛չ. զի երկուքին ևս անսկզբնակից են Հօր Աստուծոյ. և այնր աղաքաւ Որդին ճշեալ ասի յառաջ բան զյաւիտեանս, և Հոգին սուրբ՝ թղխումն մշտնջենաւոր կամ անսկզբնաբար :

Հ. Ո՞րք ոմանք ի մոլար կարծիս եղեն զսրբոյ Երրորդութեան :

Պ. Սաբէլ լիբէացի, Արիոս Երէջ Աղէքսանդրացի, և Մակեդոն Պատրիարք Կոստանդնուպոլսոյ :

Հ. Զիւր էր մոլորութիւն Սաբէլի :

Պ. Այո՛ էր՝ զի զմի միայն դնէր անձն յԱստուած՝ և ո՛չ զԵրկու, և զնոյն՝ երբեմն Հայր անուանեալ, երբեմն՝ Որդի, և երբեմն՝ Հոգի սուրբ :

Հ. Զիւր ուսուցանէր Արիոս :

Պ. Ուսուցանէր, թէ Որդին ո՛չ է Հօր համալոյ, և ո՛չ ի բնութենէ նորա, այլ՝ օտար ոմն, արարած, կրսեր, և յետ Ժամանակի եղեալ :

Հ. Զիւր ուսուցանէր Մակեդոն :

Պ. Զայս, թէ Հոգին սուրբ ո՛չ է Էութիւն անձնաւոր, և ո՛չ ընդ Հօր և Որդոյ երկրպագելի, այլ՝ աղղումն ինչ լոկ, օտար ի բնութենէն Աստուծոյ, և պաշտօնեալ :

Հ. Զփարգապետութիւնս նոցին ընկալան ամենայն քրիստոնէայք :

Պ. Ո՛չ. զի զառաջնոյն զմոլորութիւն մերժեաց Գիոնէսիոս Պատրիարք Աղէքսանդրիոյ յամի Տէառն 265. զԵրկրորդին՝ Ժողովն Նիկիոյ յամին 528. և զԵրրորդին՝ Ժողովն Կոստանդնուպոլսոյ յամին 581 (2) :

(1) Այս բան է սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի : Գիտ ի զիրա Ազաթանդեղայ (յեր. 597, ըստ հին տոյ) :

(2) Զայլոյ Տիեզերական և մասնաւոր Ժողովոյ զկարեւոր զիտելիս գտցեն խնդրոյք յեկեղեցական Պատմութեան :

Դ. Անարչագործութիւն :

Հ. Զինչ է Արարչագործութիւն :

Պ. Ե՛ արտաբերին ներգործութիւն հռանձնեայ Աստուածութեան . որով յանէլից զոյացան ամենայն արարածք՝ երեւելիք և աներեւոյթք :

Հ. Ո՞չք են երեւելի արարածք :

Պ. Երեւելի արարածք են՝ զորս մարմ է տեսանելի աչօք, որպիսի են՝ երկին, երկիր, արեգակն, լուսին, աստեղք, տարերք, մարդիկ, անասունք, ծառեր, ձկուներ, ծառք, բոյսք, և այլք :

Հ. Ո՞չք և աներեւոյթք :

Պ. Այնորիկ յարարածոց ասին աներեւոյթք՝ որք ոչ անկանին ընդ զգալի տեսութեամբ, որպիսի են հրեշտակք և հոգիք մարդկան :

Ե. Նախախնամութիւն -

Հ. Զինչ է Նախախնամութիւն :

Պ. Նախախնամութիւն ասի այն ներգործութիւն Աստուածային կամոց, որով ամենայն արարածք սղահպանեալք և խնամեալք՝ մնան ի զոյութեան, ևս և կառավարին և ուղղին աս իւրաքանչիւր վախճան :

(Շարունակութիւն . տես երես 166.)

Այլ քան զամենայն յաւիտ խընդրելին,
Անշուշտ ըզկըրօնսն ունիլ զերկնային .
Յաստուածապաշտութեան հայրենի ուխտին,
Անշարժ բարեբէլ ըզհաճոյս Վեհին :

Գործել ըզբարիս ոչ ի փառս անձին,
Այլ ում ամենայն ըզկեանսն սրբաբնին :
Յողջակէզ խոյոց և զուարակին
Պաշտել զԱրարիչն յարդար վաստակին :

Եւ այլ ևս որ ինչ պաշտօնք կըրօնին
Լիուլի պաշտել յեռանդ սեռնագին : »
Այս գործ էր Հայկայ սոյս իւր հաճելին,
Զայսոսիկ հաստեաց յիւր գերդաստանին :

Յեանեցան արդեօք սրղիք իւր աս այն
Յանձին չըբերեալ զաւանդն հայրական .
Յոր իւրեանց նախնիք ի նայն երկրաստան
Հոգւոյն հաճութեամբ համակ զօրացան :

Մի գայցէ ընդ միտս, մի ի խորհրդեան
Կարծեացն այնպիսի զոյզն ինչ կերպարան .
Զի յայն հըրահանգ իւրքն տմենեքեան
Արդեամբք և բանիւք բարեկարգ զըտան :

Արին Արմենակ հայրատիւ իշխան
Նախարարդիս վըտակ Դիւցադնին արեան .
Առ հարբն համագործ որդին ժըրաջան,
Շէնըս իւրակերտ կալաւ կայարան :

Արեւելք հիւսսոյ տունն Արարողեան
Ի դաշտ լեռնապատ վայրին բեղմնական,
Ուր զեռ կարկաշտն է յաղծահոսան
Հրուիւրէր ըզնա յիւր բընակարան :

Անդ ի հիւսիսոյ բարեղիւր կողման
Առ ըստորոտով լերին բարձրութեան
Կերտեալ ըզբաղար շէն վայելչական,
Մարդկութեամբ զերկիր լընոյր զամենայն :

Անդ ջըրվէժ հոսմանց աղբերցն աղուական
Զուր արծաթափայլ սառն և բարեհամ .
Անդ վըտակք առուաց քաղցր և հեշտական,
Յոռոգումն երկրի ծաւարածման :

Յիւրատունկն անուառ խուռն ծառաստան
Երինազարգ տնիլ զուարճ ըզբօսման,
Սօքեաց սարսափին սըրինդ սըխրական
Դըստերաց երգոց նուագ ոսկեճայն :

Երկնայիւր սասոց զարգ կանաչերփնեան
Ըզմայլումն անոյշ որդոցն էր մարդկան .
Մարմանդն առ արմունս քընքուշ նըստարան
Վարդահոտ ըզբոյր բերէր ի ոճիզան :

Գայլայիկ ծըռնոցն անդ երգ հըռուական
Զայնից համբարուացն էր յաղծողական .
Բարեխառն օդոց շընչին մեղմական
Կենաց կաղզուրիչ ի կարշնեղութեան :

Յայս տնիլ զուարճ Արմենակ Հայկեան
Հաստէր բնակութիւն ի կեանս իւր համայն .
Ուր ի հայրենի վարժսն շայլեան,
Ի շուք զօրանայր փասացն յաւերժեան :

Լերինն Արագած եզ ըզկոչ անուան,
Իսկ Արագածոտն կալուածոյ իւրեան .
Օրէնս օգտակարս հասարակութեան
Կարգեաց, հաստատուն պահել անխափան :

Արանց մըտերիւմ լինել անբաժան .
Կանանց համեստիկ կալ ի հըլութեան .
Ի սընունդ մանկանց սերտ և միական
Բերել ըզխնամա ի վարժ ի դարման :

Յարգել ըզվաստակ զաղբիւր լիութեան .
Լիքըս վիժակել ըզծին ծալութեան .
Յաջողակ ըզկիրթս ունիլ ի մըրցման
Յաղեղն ի նիղակ՝ ի սուր ի նըրան :

Մի առանց հարկի մարտ անբանական
Յազան բարոյից մըղել ընդ խուժան .
Մի պատճառըս տալ զապըստամբութեան,
Ուր զօրեզ վառի ի սկտ խեղական :

Եւ մի լըբանել զսոխթըն զիւրան,
Յորժամ յոյս կայցէ արդեանց շահեկան .

Ջանդաղար ճշգրտես յողջամիտ վարման
Պահել ի յանձինս առ ամենեսան :

Մէրս Արմենակայ այս իսկ էր միշտ ջան,
Յայտմիկ սարապէր նա անընթացական :

Որով յաջողուած բազմաբգաս բերման,
Հարուստ ամենիցն էր հաղորդական :

Ի սոյն ինձ առցես և զղիցսաղնածին
Մանաւաղ հըսկայ ըզՀայկայ որդին :

Ի շէնս աւանաց ի բարիս ազգին

Պէրճ շահատակեալ ի Հարբ նահանգին :

Մանաւաղակերտ շէն առ Նիրատին,
Օրինօք կարգէր յոյժ վայելչագին :

Ճոխագոյն բերոյ մայր առատածին,

Բազմամբոյս ղեղուն ըստ սուրբ ուսկանին :

Դարման պիտեան ի կենցաղս աղին,

Բեղմնալից գանձեալ ի սահեստ հողին :

Ճոխ և բարգաւաճ դուստր Հայկաշինին

Բերոյ հըսկայից վայլէր պանծագին :

Արբ հաստաղեղունք անյաղթք ի մարտին

Ըղբնակսն երկրին անդորր տունէին :

Ծնունդք քաջարիք հարազատ տոհմին

Հետ ընդ հետ զազգին շուք յաճախէին :

Ըղմէ՛ մոռացայց Խոռ զաղատածին

Ի մեր նախահարց յարգել ի կարգին :

Որ ըստ բարեզգեաց բուսոց իւրոյին

Պայծառ արեւէր անդ յիւր հայրենին :

Սոյն սա դէմ եղեալ յայլ կողմն աշխարհին,

Ո՛չ ի հայրենւոյն յաւէտ ի հեռին,

Շեռակերտ նոր շէն կանգնէր ի վայրին,

Մերել ի յարին հարազատ տոհմին :

Էր ի դէմսն իւր տեսք անեղագին,

Փառք վայելչութեան ըղբեցեալ յանձին :

Կայտառ իւր արին յաշխոյժ հասակին,

Ըզհանգէտն որդւոց բերէր Տխտանին :

Որդեա՛ք արժանի ղիւցաղանց Մեծին

Ջորոյ կերպարան կըրէր յերեսին :

Յարենէն որոյ մարտիկը անագին,

Հուժկու կանգնեցան իւր զաստակերտին :

Արբ արհօրարկուք թըշնամեաց զընդին,

Ի սուր ի գեղարդն անդոյգը ի խաղմին :

Հըղօր թիկնապահը կարգեալք արքային,

Բերդ իմն անառիկ էին ի խըմբին :

Նախարարութիւն սոցուն պանծագին

Հաստեցաւ յետոյ առ Վաղարշակին :

Որք Խորխոռունի անուամբ ճոխային,

Ըզնախնեացն անուն պատուեալ ի զարմին :

Իսկ Բազ սեպուհ թոռն ի Հայկեան գումար

Ի շինից հանգէս շէն և կամակար,

Առ ծովակն աղի վայր արդիւնարար,

Իւրովըն հանգերձ առնու ըզգաղար :

Աճեալ ի սերունդ յորդ լիսպատար,

Նոր իշխանութիւն հաստէր տիրաբար :

Ուր սիրտ ուժգնութեան միշտ բաղմանանար,

Ձեղոյր ի ժառանգս իւր ծաւալածայր :

Ձէր անդ մեղկութիւն չէր կարիք վատթար

Վարմանն եղանակ յոյժ բարեշարդար :

Ուստի Բըղնունի տոհմ իշխանաւիտ,

Յազգին զօրանայր ի զօրեղ վըտառ :

Նոյն և այլ որդիք Հայկայ միայար

Ի գործ հայրենի վարժ և սիրահար,

Յոգնաղան բարեաց կանգնեցան պատճառ,

Լըյն ղՀայաստան ի մարտեաց կանառ :

Աստ էր խընդութիւն սրտի անըսպառ :

Աստ Հայկ խընդամիտ յանձն իւր ի սպառ :

Ուր հովանաւոր բաղմանիւղն այն ծառ,

Ձըգէր շառաւիղս ի տոհմաւ պայծառ :

Հայկ գոռ միտպետ յՆդեմեան գաւառ,

Ի յաղթ շամբընոց հըսկայ սըրաւառ

Հայկ ղէն մահարար առ զարմն շըղառ,

Պարգև երկնային առ բարեաց պիտառ :

Հայկ ի լիբանան ի Հարբեան ղեմառ,

Տընկազործ ըղգօն յերկունս անյամառ :

Ուր խիտ խիտ մայրիւք ըղբանեանցն անտառ,

Նրկնալիւր ստեղնեաց ի կողերս կայտառ :

Հայկ իրաւագէտ դատիչ անաչառ,

Յօգտաւէտ վըճիւս իւր անհակաճառ

Հիմունս մեղ գանձեալ բարեացն անվաճառ,

Նիւթս ետ բերթոցաց զովեստիցն ի ճառ :

Սա երջանկութեան մեր ձեռնկարկառ :

Սա մըթէրք վառաց մեղ լեռնակարկառ :

Մատիւր աչպա դու բարւոք ի միտ առ,

Ըզսորայն զըրուատ՝ երգել ի կիծառ :

Համարառու Տըլէդր :

Ի ԲԱՐԻՉ, ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ :

Paris.— Typographie arménienne de Walder, rue Bonaparte 44.